31 Լույս է տալիս կյանքին մեր

1. Լույս է տալիս կյանքին մեր
Սերը շնչով Իր սուրբ,
Խինդով լցնում սիրտը մեր
Սերը՝ գգվող ու նուրբ:
Ողջ գիշեր մեր օրոցքին,
Ինչպես մայրը անքուն,
Մեզ համար Նա կաթոգին
Աղոթում է թաքուն:

2. Եվ երբ կայծակի թափից
Ցնցվում ենք ու դողում,
Սերն է լալիս մեր վշտից,
Վշտերից՝ ամոքում:
Սերը մեզ միշտ ներում է,
Պատվիրում է ներել,
Բոլորին Նա սիրում է,
Իր պատգամն է սիրել:

3. Սերն ուժեղ է ավելի
Սրբացած սրտերում,
Ոչ թե խանդում ահալի,
Երազի ամպերում:
Սերը մեզ ներշնչում է
Անգամ կյանքը զոհել,
Երբ մեկը հառաչում է,
Անօգ է ու անել:

4. Առանց սիրո իզուր են
Պարգևները բոլոր,
Խաչվելն անգամ էլ զուր է,
Զուր՝ հավատքը հզոր:
Կանցնի մահվան սև գիրկը
Եվ արևը բարի,
Սերն է միակ անշեջը,
Միայն սերը կապրի:

5. Նա աշխարհին էլ է չար
Նորից կյանքի կոչում,
Քանզի Աստվածն է Նա՝
«Սքանչելի» է կոչվում:
Ողջ գիշեր մեր օրոցքին,
Ինչպես մայրը անքուն,
Մեզ համար Նա կաթոգին
Աղոթում է թաքուն: